

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(Գիտուրյան վաստակավոր գործիչ)

## ՄՅԱՅՐԱՅԻ ՄԱՅՐ ՏԱՅԱՐԸ

(Պատմական ականք արկ)

Եր թվագրության ե դարից է, որ թրիլիսին (Տփղիսը) զառնում է Վրաստանի մայրաքաղաք: Իսկ մինչ այդ վրաց մայրաքաղաքը Մցխեթան էր, Կուր և Արագվի գետերի միախառնման անկունում, որի դիմացը մեր օրոք ստեղծվեց Սովետական Վրաստանի անդրանիկ հիդրոկայան Զահեսը:

Վրաստանի քաղաքներից Հնագույնի՝ քաղաքամոր՝ անոնմ թեև հայոց մեջ և, մասնավորապես, հայ մատենագիրներից մի երկուսի մոտ (Մոլսես Խորենացի, Անանիա Շիրակացի) հիշվում է Մցխեթ ձևով, սակայն այդ սխալմամբ է, որ, անշուշա, պիտի ուղղել այնպես, ինչպես այն սովորաբար գործածվում էր և գործածվում է թե՛ վրացիների մոտ և թե՛ Հայ մատենագրության մեջ:

Մենք ի նկատի ունենք, մի կողմից, «Գիրք թղթոց»-ը, իր սկզբնական հնագույն մասում, որ Ե-է դարերին է պատկանում, և մյուս կողմից՝ Ժ դարի պատմիչներ՝ Ուխտանես հպակապու Պահայեցու (Եփսացու) պատմության երկրորդ գիրքը և Ահարոն երեց Վանանդեցու «Նոնեի խաչի պատմությունը», ուր գործածվել էն Մծինիթ, Մցիթա և Մըցիթիթ ձեերը, որոնք համապատասխանում են ավելի շուա վրացական «Մցխեթա»-ին, քանի անդու «Մցխեթա»-ին:

Իսկ «Մցխեթա»-ն, որ կազմված է թա մասնիկով, այն է տեղանունների ցուցիչ վերջանցակավ, ինչպիսիք Ան, Օրինակ, Բիճավնորա կիորք, Չիմիկիք և այլն, ընդուկում է իր

մեջ մցխե արմատը, որը հանդիս է գալիս նաև «Աս-մցին» երկրամասի անվան մեջ: Դա նույն մեսս ցեղն է (ազգակից Հայքի մոխ և մուշ ցեղերին), որից առաջացել է օՄեսինեթ աշխարհագրական անունը և որի հնագույն ձեզ՝ Մերեխ կամ Մոսխ՝ պահպանված է Աստվածաշնչի մեջ (Ծննդոց, Ժ 2, 23, Ա. Մնացորդաց, Ա, 4, 17, Մարգարետին եւսայիալ, ԿԶ, 19, Մարգարետինին եղեկիչի, ԼԲ, 26, ԼԸ, 3):

Այսպիսով, Մցխեթա տեղանունը, որ կազմված է թա վերջածանցով, ինչպես և Սամցին-ն, որ կազմված է սա նախածանցով (որոնցից թա-ն աշխարհական կամ է նշանակում, իսկ սա-ն՝ երկիր կամ երկրամաս) բխելով մցխե կամ մեսս ցեղի անունից է մեղ գեպի հնառավոր անցյալը, երբ Կուր և Արագվի գետերի միախառնման տեղում ու նրա շրջակայքում ապրում և գերիշխում էր այդ ցեղը, որը հետագայում ձուվեց քարթիւնների կամքի մեջ, երբ հիմք գրվեց Խվերիայի (Վերիայի, Վիրիք) կամ Քարթիիի, այսինքն Արևելյան Վրաստանի պետությանը, հավանական է Բ-Ա գարերին մեր թվագրությունից առաջ:

Դ գարի 30-ական թվականներին Արևելյան Վրաստան մուտք է գործում քրիստոնեության մությունը, որ շուառվ զանում է պետական կրոն: Վրաստանում քրիստոնեության մուտքով սկսվում է եկեղեցական շինարարությունը, առաջին Հերթին, իհարկե, քաղաքամայր Մցխեթայում, որը գառնում է

Վրաց եկեղեցու Աթոռ, կաթողիկոսանիստ վայր և հոգեոր կենտրոն:

Մցիսեթայի եկեղեցական շինարարությունը սկզբնական շրջանում շատ նման է եղիլ Հայաստանի քաղաքամայր Նոր-քաղաքի (Հունարեն Կայինեպոլիսի) հետագայում Վաղարշապատի, ինչպես նաև մարզպանական Դվինի շինարարությանը:

Խշակս Վաղարշապատի Կաթողիկեն (Միածնի հշման Մայր Տաճարը) Դ—է դարերի ընթացքում շրջապատվում է Ս. Գարեգի ընթացքում շրջապատվում է Ս. Գարեգի ընթացքում շրջապատվում է Ս. Գարեգի Ծոփակաթի (Մարտինենի) և Արապարի Զվարթնոց տաճարներու, նույնպես և Մցիսեթայի կաթողիկոսանիստ Մայր Տաճարի շուրջը նույն գարերում կառուցվում են այսպիս կոչված «Անտիոքի» եկեղեցի-վանատունը, «Զվարի»-ն (բլրի Ս. Խաչը), իսկ ԺԵ դե դարից՝ Սամթավրոն, չհաշված, իհարկե, քիչ հնուո գոնվող վանքերը (Զեղագենի, Ծիուլվամեն՝ Զ. դ.):

Խշակս Վաղարշապատի Կաթողիկեն կառուցվում կապկում է Միածնի հշման տեսական հետ՝ ըստ Հայոց գարձի պատմության, որի կապակցությամբ նոր (Կաթողիկեն) կենտրոնում ամփոփվում է հշման սեղանը, նույնպես և Մցիսեթայի Մայր Տաճարի սրբությունը սրբոցն է կազմում այսպիս կոչված «Ավետի ցխովելիք»-ն, այսինքն կենդանի, կենաց, կենարաց սյունը՝ համաձայն Վրաց գարձի պատմության: Այդ «սյան» տակ, որն իրենից ներկայացնում է քառանկյունի և քառասյուն պատկերագրված բավկանինին բարձր գերտավածք Տաճարի հարավային գուգգ մուլթերի միջև և նրանց շարքում ըստ ավանդուրյան թաղվել է «Փրկչի շապիկը»: Ուստի և եկեղեցին գուշվել է «Ավետի ցխովելիք», ինչպես այն հայտնի է մինչև մեր օրերը: Այս «սյան» կապակցությամբ Տաճարի տոնը սահմանվում է հոկտեմբերի 1-ին հին տոմարով, որ համընկնում է Ս. Կուլսի «Գիւտ գտաւոյ» տոնին, ընայած այն համաժամանքին, որ տուշ միջնադարում, երբ տեղի են ունեցել Տաճարի վերամորգությունները, եկեղեցին նվիրվել է «Երկուտասան առաքելոց» անվան (ի թեպ, նշենք, որ Տաճարի ավագ խորանում՝ բեմում կլորած պատի ամբողջ երկարությամբ ձևալորված է 13 խորշ՝ Քրիստոնու և 12 առաքյալների խորհրդանշով, ինչպահանում՝ նստացներ կաթողիկոսի և համբաւավոր դեպքերին նրան սպասարկող 12 եպիսկոպոսների համար):

<sup>1</sup> Այս խնդրի շուրջը տե՛ս Հ. Մարը. «Хитон Господень в книжных легендах армян, грузин и сирийцев». «Сборник статей учеников барона В. Г. Розена». СПб. 1897, стр. 67—96.

Մցիսեթայի Մայր Տաճարը, ինչպես և Վաղարշապատի Կաթողիկեն սկզբում՝ Դարում եղել է փայտաշեն. ապա ն դարի երրորդ կեսին, Վախտանգ Գորդասալ թագվորի (Վահան Մամիկոնյանի ժամանակացի) օրոք, այն վերածվել է քարակերտ հակայական բաղկիկայի (եռանավ անզըմբեթ երկարածիկ շենքի), որ նման է եղել Դվինի բաղկիկայի նախնական կառուցվածքին:

Մցիսեթայի և էջմիածնի ու Դվինի կաթողիկոսանիստ Մայր Տաճարների սկզբանական կառուցվածքների հանգամանքները և նրանց նմանությունը, իհարկե, պատահական չըր, այլ առնչվում էր ժամանակի ոգում, որի ցայտուն արտահայտություններից մեկն էր մարզպանական Հայաստանի ոստան Դվինում 506 թվականին, հայոց Բարգեն Ա և Վրաց Գարբիել Ա կաթողիկոսանիրի գլխավորությամբ գումարված միասնական՝ հայոց, վրաց, աղվանից և սյունյաց եկեղեցական ժողովը<sup>2</sup>:

Զ դարում արդեն Հայոց և Վրաց աշխարհների միջև, ըստ «Գիրք թղթոց»-ի և Ովտանիս պատմիչի, «սէր և խնամութիւնք մարմնատրականք և Հաղորդութիւնք Հոգմուրականք կատարէին ցնծալից ուրախութեամբ. աստի (ի Հայոց) և Մծնիրայի ի Խաչն գալով և ալտի (ի Վրաց) և Սուրբ Կաթողիկէք<sup>3</sup>: Այլև «Ազատ մարդիկն, որ ի Հայոց, ի Վիրս խնամութիւն արարեալ էր, ի Սուրբ Խաչ Մծնիրայի աղօթել և օրինաց Հաղորդէին, նոյնպէս և որ աստի (ի Վրաց) այդը (ի Հայո) գային ի Սուրբ Կաթողիկէ և յայլ եկեղեցիսդ աղօթել»<sup>4</sup>»:

Հայերն ու վրացիները, բայ նույն «Գիրք թղթոց»-ի, Ովտանիսի և Սովունի Կաղանկատվացու, միասին էին ոյազօթի, ի կերակուրս և լըրպելիս, ի քարեկամութիւն, ի դայիկութիւն, աղօթիւք երթալով ի Խաչն, որ ի Մցիսեթայի տեղօքն համբաւի, և ի Մանգղեաց խաչն...»<sup>5</sup>:

Ժ—ԺԱ գարերը տնտեսական և քաղաքական մեծ վերելքի ժամանակաշրջանն էր

<sup>2</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901 թ., էջ 180—184: Կնք համարու... յաւուր Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, հրատ. Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչան), էջմիածին, 1914 թ., էջ 139—142:


<sup>3</sup> «Գիրք թղթոց», էջ 164 (ընդունեները այստեղ և ստորև մերն են—Լ. Մ.-Բ.):

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 194: Սովունի Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղուանից», թ. 48:

մե՛ Հայաստանի և թե՛ Վրաստանի համար։ Վրաստանում այդ շրջանից սկսվում է շինարարական բուռն գործումնեղիքում, հոյակալ և երկնասալաց տաճարների կառուցումով։

ոմեծամեծ վանորայք վրաց ի գիւղն եախով[լ], Ուշ և հշխան, որ յար և նման ոչ գոյնոցա, բայց թէ լինի միայն Սուրբ Սովի ի Կոստանդնուպօլիս»<sup>6</sup>։



ՄՑԽԵԹԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԻՒՄ ՄԱՅՐ ՏԱճԱՐԸ

Անիի Կատրամիդե հայոց թագուհու ծախսով կառուցված Կաթողիկեի (Մայր Եկեղեցու) և Զվարթնոցի նմանողությամբ կառուցված Գագկաշեն տաճարին հասակակից է վրաց Բագրատ Գ թագավորի կառուցած Մայր Տաճարը Քութալիսում։ նմանապես՝

6 Ըստ Ժէ գարի նշանավոր հայ ուղեգիր Հակոբ Կարենցու, «Ճեղագիր Վերին Հայոց», հրատ. Կ. Կուտանյանց, Վաղարշապատ, 1903 թ., էջ 17: — «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դ. դ.» հատ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956 թ., էջ 554:

ԺԱ դարի առաջին կեսին սկսվում և ավարտվում է զույգ հոյակապ Մայր Տաճար-ների կառուցումը Արևելյան Վրաստանում, մեկը՝ Մցխեթայում, Վախտանգ Գորգասա-լի ժամանակ (Ե դ.) շինված բաղիկայի հիմքերի վրա, մյուսը Կախեթում, Ալավանի գետի աջ ափին՝ Ալավերդիում:

Մցխեթայի Մայր Տաճարի վերակառու-ցումը, այսինքն՝ ավերված բաղիկայի հարմարեցվելը գմբեթակիր Տաճարի, ընդուրձակելով ամ դեպի արևելք և արեմուտք, 5 զույգ մուլթերով, կատարվում է Մելքիսեդեկ Ա. կաթողիկոսի 1012—1030, 1039—1045 թ. թ.) ձեռներեցությամբ և ճարտարապետ Արտովիչսձեի ղեկավարությամբ, որոնց անոնմները փորագրված են նույն Տաճարի և Տաճարին կից Կաթողիկոսարանի մուտքի ժԱ դարի առաջին կեսի երկաթագիր վրացերեն արձանագրություններում, Ահա այդ արձանագրություններից լեկը, Տաճարի արևելյան պատի վրա (մեր թարգմանությամբ). «Փառարանի՛ր, Աստ-ված, Քրիստոսով Քարթիկի Մելքիսեդեկ կաթողիկոսին, ամեն Կառուցվեց այս սուրբ եկեղեցին ձեռամբ նոցա տրուած ծառայի՝ Արտօվիսձեի: Աստված Հանդիսատ պարզմի նրա հոգուն»:

Մյուս արձանագրությունը փորագրված է Հյուախային պատի վերին մասում, լուսա-մուտքի բարձր, ճարտարապետի աջի և անկյունաչափի խորդումնելլը արտահայտող բարձրաքանդակի կողքին, աջից, այսպիսի բովանդակությամբ (մեր թարգմանությամբ. «Ճեռն ծառայի [Աստուծոյ] Արտօ-կիսձեի. ողորմի [ասացէք]»<sup>8</sup>:

Պատմա-մատենագրական տվյալներով այժմ ապացուցված է, որ Տաճարի վերակառուցումը ավարտվել է 1029 թվականին:

Մցխեթայի Մայր Տաճարը հիւտագրայում վնասվել է մոնղոլական և մանավանդ Լանգ-Թեմուրի արշավանքների ժամանակ և հիմնովին վերանորոգվել է Ալեքսանդր Ա. Մեծ արքայի (1412—1443 թ. թ.) հոգատարությամբ: Խմանապես, մի քիչ ուշ վերականգնել է փուլ եկած գրեթեր, թեև ավելի փոքր չափով (ցածր), քան պիտի այն լիներ ժԱ դարում:

<sup>7</sup> Այս Ալավերդին շպետք է շփոթել Հայաստանի Ալավերդի (քաղաքի, կայարանի, պղնձահանգի) հետ:

<sup>8</sup> Արձանագրությունների վրացերեն բնագրերը ան' ու լ. Մուսավելչլիկ, «Մցխեթայի Սվետի ցիովելի Տաճարի հնագույն արձանագրությունները և նրանց առնությունը Մելքիսեդեկ կաթողիկոսի կտակի հետո. «Ars Georgica», I, Թբիլիսի, 1942 թ., էջ 136—137 (վրացերեն):

Վերջին ժամանակներում Տաճարի նորո-գողներից մեկն է Հանդիսացել Դոմենիսի Գկաթողիկոսը (1660—1676 թ. թ.), որի մահվան թվականը՝ 1676 թ. սեպտեմբերի 22՝ արձանագրված է Տաճարի արևմտյան սրահի հարավային պատի վրա փորագրված հիշատակարանում վրացերեն բոլորագիր տակերով ունի ունի հույս մեղապարտ Ալարմազ Ղարաշվելու ձեռքով, տարիեթիվի նշումով հայտառ գրով մամր և բատ հայկական տումարի՝ Ռեմի (1676):

Երկար դարերի ընթացքում կրած փոփոխություն-վերակառուցումներից հետո Մցխեթայի Մայր Տաճարը, որը հիացնում է այցելուին փրափմազան և հարուստ քանդակավարությամբ, իր այժմյան վիճակում ունի 58 մետր երկարություն, 25 մետր լայնություն և 65 մետր բարձրություն:

ԺԱ դարի առաջին կեսին Մցխեթայի Մայր Տաճարի վերակառուցման աշխատանքներին գույք հեռաբար Տաճարի բակում՝ արևմտյան կողմից՝ կառուցվել է երկհարկանի Կաթողիկոսարանը (Վեհարանը), որից մեկ հասկել են միայն կիսամետր պատերը: Կաթողիկոսարանին կից եղել է Տաճարի բակի մուտքը: Կիսամետր կամարի վրա նկատվում է վրացերեն երկաթագիր տառերով փորագրված արձանագրության մեջացրողը, ուր կարտացվում է Տաճարի սեպտեմբերի մուտքը և այլ գամբարանի մուտքը մեջ կաթողիկոսի գամբարանը:

Տաճարը շրջապատված է պարսպով, որն ունի քառակառուցող Մելքիսեդեկ կաթողիկոսի անոնմը, որի գերեզմանը գտնվում է Մայր Տաճարի ներսում՝ Հարավային պատին կից: Այս գամբարանի մուտքը մեջ այլ գամբարան, որը ենթադրվում է յինք Դոմենիսի կաթողիկոսի գամբարանը:

Տաճարը շրջապատված է պարսպով, որն ունի քառակառուցող հատակավիծ, անկյուններում գլանաձև աշտարակներով, որ ժՈ դարի գործ է Համարվում:

ԺԱ դարի կեսին կամ եղիքորդ կեսին նույն Մցխեթայում, երեսին Ա. Նինոյի (Խամիկ) ապրած վայրում, պարսպի և աղոթառունմատուփ կից (տը Վրաստանի առաջին կիցիցին է Համարվում և վերանորոգված ձևով է հասել մինչև մեր օրերը), վրաց առաջին քրիստոնյա թագավոր Միհրանի (Միհրանի՝ «առաջնորդին վրաց»—ըստ Հայ պատմիների) և նրա կողակից նանայի գամբարանների վրա, հիշյալ մատուսկց գեղարդի հարավ-արևմտյառ, կառուցվում է քառասյուն գմբեթակիր մի տաճար, որը կոչվում է Սամբթավոր, այսինքն Խշանական: Սա ևս դրսից զարդարված է բաղականին ճոխ քանդակագրությամբ: Հարավից, հրաւիսից և արևմտյառից կցված սրահները, իշարկե, հետագա դարերին են պատկանում: Տաճարի մեջ, Հարավ-արևելյան անկյունում, ըստ պահպանության, գույց են տրվում հիշյալ թա-

դավարի և թաղումնու դամբարանները՝ ժթ դարում նորոգված տապանաքարերով և տապանագիրներով: Տաճարի բակում, հրուսիսարեմույան անկյունում, գտնվում է եռահարկ զանգակատունը, կառուցված ժամ դարում, իսկ հարավ-արևմտութից՝ գլանաձև աշտարակ-ամրոց, հավանական է նույն դարի:

Սամթավորն և նրա ջրչափակը ժթ դարի սկզբից վերածված է կուսանաց անապատի, որն իր գորությունը շարունակում է մինչև այսօր: Տաճարը կրում է «Պայծառակերպութին Տհանհա անոնք»:

Մցիսթայի Մվեսի ցիստվելի Մայր Տաճարի և Սամթավոր տաճարի կառուցման շուրջ վրաց բանահյուսության մեջ կա շատ հետաքրքիր և հատկանշական մի աշխատություն, ըստ որի Մայր Տաճարը կառուցել է վարպետի աշակերտը, իսկ Սամթավորն՝ ինքը վարպետը: Կառուցումից հետ Մայր Տաճարը՝ համեմատությամբ մյուս տաճարի, ստացվել է ավելի շքեղ ու հայակապ, և դրանից դառնացած վարպետը կըտրել է իր աշակերտի ձեռք, որ և ամփոփել է Տաճարի հյուսիսային պատի վերել մասում, լուսամուտից բարձր, ուր ճարտարապետի խորհրդանիշն է դիտվում, այսինքն ձեռքի և անվյունաշափի բարձրագույնակը, համապատասիրան արձանագրությամբ հանդիրձ:

Ցալոք սրտի պիտի արձանագրել, որ լույս Տաճարների հին պատկերագրությունից շատ քիչ բան է հասել մեզ, որովհետև նրանց պատերը ներքուստ ծեփվել են ժթ դարի 40-ական թվականներին: Խորանի հին խաչկալներից էլ մնացել է միմիայն Սամթավորինը՝ ժԴ-ժԵ դարերից:

Մցիսթայի պատմական հուշարձաններից ամենահինն է այսպես կոչված «Անտիռիի» եկեղեցին, քաղաքի ժայռին, Արագվի գետի

<sup>9</sup> Կարենը է նշել, որ ճարտարապետի բարձրագույն խորհրդանիշը ձեռքի (աշխ) փորագրությամբ առկա և ո՛չ միայն Մվեսի ցիստվելի տաճարի պատի, այլև այլուր, օրինակ, եմերեթի Գուրանդիանի, Լեշումբի Մցիսթայի, Հարավ Օսեբի Լարգիսիի, Հյուսիսային Օսեբի Թիարա-Երդի և այլ եկեղեցիների պատերի վրա: Մասրաման տե՛ս մեր ուսումնաբության մեջ՝ «Рельефы руки на памятниках материальной культуры феодальной Грузии», Վրացական Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, Թբիլիսի, 1957 թ., էջ 109—130 և նկարներ՝ 8, 10—13:

աջ ամբիմ: Դա՝ Զ դարի եռանավ բազիլիկացի մնացորդ է (քանի որ մեզ հասել է շենքի միմիայն մի երրորդական մասը): Եկեղեցին ուղղահայաց գծով կապված է եղել բլրի Ս. Խաչի հետ, այնահետ որ այստեղի ժամարագը միշտն խորանի պատուհանից զիտելիս է եղել Ս. Խաչը: Եկեղեցին համարվել է Անտիռի Պատրիարքարանի վանատոմը:

Զ-է դարերում կառուցվել է բլրի (ըստ Մ. Խորենացու և Ա. Վանանդեցու)՝ «Ձվարի»-ն, այսինքն Ս. Խաչ կոչված կոմպլեքսը, որ բաղկացած է մեծ և փոքր տաճարներից, ինչպես նաև ուրիշ շինություններից, որոնք այժմ կիսավեր են ու ամայի: Դրանցից մեծը, որի սեղանը (բեմը) և կենցեցու կենաւրունում է եղել և գրմբի տակը, հիշեցնում է Ս. Եջմիածնի իշման Սեղանը՝ Տաճարի կենաւրունում<sup>10</sup>: Այն կառուցվել է Ս. Հոփիսիմենի տաճարի հետ միաժամանակ և միանման հատակագծով, իբրև կենաւրունագմբեթային տեսրակոնիս, միայն այն տարրերով յամբ, որ Ս. Հոփիսիմենի հատակագիծը սկզբից քառանկյունի է՝ մեջը անդավորված քառարամիդ խաչը և շորս ավանդատներով, անկրամներում, մինչդեռ Ձվարին ներկայացնում է իրենից պկվից քառարամիդ խաչ, անկյուններում չորս ավանդատներով, որ շրջապատված է քառանկյունով: Այսպես թե այնպիս, երկուսն էլ հայ և վրաց արվանդատագմբեթյան արդյունքն են, երկու ազգակից ժողովուրդների մշակությային հանճարի արդասիթ<sup>11</sup>:

Մցիսթայի Մայր Տաճարը մեծ դեր է կատարել վրաց ժողովրդի պատմության և մշակութի զարգացման գործում, ինչպես Ս. Եջմիածնը հայ ժողովրդի կյանքում: Վրաց ազնիվ և տաղանդավոր ժողովուրդը, իր հոգու բամբանդակ շերմությամբ, սիրել է Մցիսթային կապված է մնացել իր համապատասխան ամենահին ու պատմական այլ սրբավագայիրի հետ:

<sup>10</sup> Այս մասին տե՛ս մեր հոդվածները «Կ вопросу об устройстве алтаря в древней Грузии», «Христианский Восток» (Петроград), т. IV, стр. 310—312: «Վեմքար», «Հովհան», (Թիֆլիս), 1916 թ., № 3:

<sup>11</sup> Հմմատ. Մ. Աղաբարյան, «Վրաստանի և Հայաստանի գմբեթավոր շենքերի կոմպոզիցիան», Երևան, 1950 թ. (ոսուերեն):

